




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5777

**ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱՅՈՆԻ
7-րդ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ**

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТАНОВЛЕНИЙ
Академии Наук
СССР

**ПОСТАНОВЛЕНИЯ и РЕЗОЛЮЦИИ
7-ой РАЙПАРТКОНФЕРЕНЦИИ АРМЯНСКОГО РАЙОНА
СЕВ.-КАВ. КРАЯ**

ЗКПІ(47.9)
2.22

MAR 2014

2 5 AUG 2005 32-11
A 190

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЗЕМЛЕ-
Академии Наук
СССР 1 DEC 2009

ԲԱՆԱԹԵՎ ՌԱՅԿՈՒՄԿՈՍԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Խորհրդային Միությունը, ամրապնդելով հնգամյակի առաջին յերկու տարվա ընթացքում ձեռք բերած հաջողությունները, սկսեց իրագործել յերրորդ, վճռական տարվա խնդիրները,—սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը:

Բանվոր դասակարգը, կոմունիստական կուսակցությունը ղեկավարությունը, դասակարգային կատարյալ պայքարի պայմաններում, շնորհիվ իր հերոսական, իսկապես բողջիկյան աշխատանքի, շնորհիվ նոր ձևով աշխատելու, կարողացավ կենսագործել 1931 թվականի խնդիրները, նորահաջողություններ ձեռք բերելով սոցիալիստական շինարարության գործում:

Արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճը 20—21 տոկոսով—1930 թվականի հանդեպ,—նրա առանձին ճյուղերում (նավթ, գունավոր մետաղներ և այլն) հընգամյակի կատարումը յերկու և կես տարում, վոչ միայն արդյունաբերության, այլ և գյուղատնտեսության մեջ «ով ում» հարցի լուծումը հոգուտ սոցիալիզմի,—կոլտնտեսություններում չքավոր-միջակ տնտեսությունների 60 տոկոսի համախմբման հետևանքով,—Միության հիմնական հացահատիկային ռայոններում համատարած կոլեկտիվացման ավարտումը հիմնականում և նրա հիմունքով կուլակության վերացումն իբրև դասակարգ, անասնաբուծության սոցիալիստական վերակառուցումը, բանվորների ու կոլտնտեսական



КНИГОИЗДАТЕЛЬСТВО
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

կան մասսաների նյութական-կենցաղային պայմանների ու բարեկեցութեան լավացումը,— ահա այն հիմնական ցուցանիշները, վորոնցով խորհրդային Միութիւնն ավարտեց յերրորդ, վճռական տարին և թևակոխեց հնգամյակի վերջին,— չորրորդ տարին:

Խորհրդային Միութեան բուռն աճման մոմենտին, կապիտալիստական աշխարհը, գալարվելով չտեսնված, ավելի խորացող համաշխարհային տնտեսական ճգնաժամի՝ հետընդհատ սեղմվող ճանկերում, վորն ընդգրկել է նույնիսկ ամենաառաջավոր յերկրների տնտեսութեան բոլոր ճյուղերը, — գլխապտույտ արագութեամբ մոտենում է իր գոյութեան վախճանի սկզբին:

Արդունաբերութեան բոլոր ճյուղերում չի դադարում արտադրանքի կրճատումը, միաժամանակ աճում է գործազրկութիւնը, յերկարացվում բանվորական որը, կրճատվում է աշխատավարձը և վատանում են բանվոր դասակարգի նյութական-կուլտուրական պայմանները. ուժեղանում են հակասութիւնները կապիտալիստական յերկրների ներսում, սրանք հանդիսանում են կապիտալիստական աշխարհի աշխատանքների հանրագումարները:

Կապիտալիստական աշխարհը ստեղծված գրութեան պատճառը համարում է հնգամյակի հաջողութիւնները և առհասարակ, խորհրդային Միութեան գոյութիւնը և շարունակում է պատերազմի տենդային պատրաստութիւնը խորհրդային Միութեան դեմ: Միևնույն ժամանակ նա բոլոր միջոցներով ու յեղանակներով, մեր ներքին դասակարգային թշնամիների միջոցով աշխատում է խանգարել մեծ շինարարութեանը:


Խորհրդային Միութիւնը, շարունակելով խաղաղութեան քաղաքականութիւնը, միաժամանակ պատրաստ լինելով հակահարված տալու բոլոր նրանց, ով կհամարձակվի ձեռք բարձրացնել Հոկտեմբերյան հեղափոխութեան մեծ նվաճումների դեմ, պայքարելով բոլոր դասակարգային թշնամիների ու նրանց յետևորդների դեմ, պայքարելով կու-

սակցութեան գլխավոր գծի համար, կենտրոնական Կոմիտեյի ղեկավարութեամբ դեպի սոցիալիզմի նոր հաղթանակներն և առաջնորդում բանվոր դասակարգին և կուլտեսասային մասսային, վորոնք հերոսական աշխատանքի և քաղաքական բարձր գիտակցութեան որինակներ են ցույց տվել:

Մահելով հնգամյակի չորրորդ, վճռական տարին այն կոպիտ սխալներն ու ծռումներն ուղղելուց հետո, վորոնք ռալկուսկազմակերպութեան նախկին ղեկավարութեան կողմից թույլ ելին տրված 1930 թվականին համատարած կոլեկտիվացման ժամանակ և վորոնք բարդացրել ելին Հայկական Ռայոնի քաղաքական դրութիւնը, վորը միանգամայն կայուն եր արդեն վեցերորդ կուսկոնֆերենցիայի մոմենտին— ռայոնի առաջ, իրբև համատարած կոլեկտիվացման յերկրամասի,— Հյուսիսային Կովկասի ռայոնի— գրվեցին գյուղատնտեսութեան հետագա սոցիալիստական վերակառուցման և կուլտուր-տնտեսական շինարարութեան խընդիրները:

Իր աշխատանքի հիմքը դարձնելով յերկրային վեցերորդ և ռայոնական կուսկոնֆերենցիաների և հետագա պլենումների վորոշումների պրակտիկ կենսագործումը, ազգային ռայոնի պայմաններում՝ իր յուրատեսակ առանձնահատկութիւններով (կուլտուրական հետաձնացութիւն, աշխարհագրական դիրք, ճանապարհների բացակայութիւն, բնակավայրերի ցրվածութիւն, տեղական պատրաստված կազմերի բացակայութիւն և այլն), վորոնք ամբողջովին վերցրած ավելի ելին բարդացնում աշխատանքը,— հայկական ռայկուսկազմակերպութիւնը, շնորհիվ համառ աշխատանքի ու կուսակցութեան ազգային քաղաքականութեան ճիշտ կիրառման, հաջողութեամբ կատարեց 1931 թվի խընդիրները, նոր և մեծ տեղաշարժեր առաջ բերեց ռայոնի տնտեսական-կուլտուրական աճման, մանավանդ գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակերտման գործում:

Կոնֆերենցիան գոհունակութեամբ մատնանշում է կուլտնտեսային շինարարութեան հաջողութիւնները— ռայոնում



56355-66

համաժողովը կոչեցի վաղուց ավարտումը հիմնականում (83 տոկոս կողմնակցությամբ) և նրա հիմունքով կուլակություն վերացումը իբրև դասակարգի Ապահովվել և տնտեսա-քաղաքական կամայանքների կատարումն ու գերակատարումը, վոր հիմնականում բնորոշվում է հետևյալ ցուցանիշներով:—

ա) Կամավոր սկզբունքի հիման վրա կուլեկտիվացումը 1931 թվի հունվարի 1-ի 20 տոկոսից հասել է 1932 թվի հունվարի 1-ին 83 տոկոսի: Միաժամանակ վորոշ չափով ամրապնդվել է գոյություն ունեցող կուլտեսությունների կազմակերպչական-տնտեսական դրությունը: Ամրապնդվել են նրանք մանր, «թղուկային» կուլտեսությունների միացմամբ, նկատելի կերպով աճել է հենց իրենց, կուլտեսական մասսաների ակտիվությունը (Սոչու ռայոնը բուկարի վերցնելը ձխախոտի հավաքման համար, ներկուլտեսական ոգնություն, կիրականորյակներ անտառադրուհաբերական տնտեսությունների համար և այլն):

բ) 1930 թվականի հանդեպ ցանքերի տարածություններն ավելացել են 31,3 տոկոսով և գլխավոր կուլտուրայի—ձխախոտի ցանքերը—46,4 տոկոսով:

գ) Անասունների թիվը աճել է 56,7 տոկոսով և կազմակերպվել է սոցիալիստական սեկտոր անասնաբուծության մեջ (1 կաթնա-ապրանքային ֆերմա, 217 գլուխ անասուններով, 3 խոզա-ապրանքային ֆերմա, 432 գլուխ խոզերով և հատուկ հորթեր մեծացնող 1 ֆերմա):

դ) Հաջողությամբ անց է կացվել գարնանացանի կամպանիան (կարճ ժամկետում կատարվել է պլանը), քաղհանի և բերքահավաքի (ժամկետից առաջ) կամպանիաները:

յ) Գյուղատնտեսության ընդհանուր և ապրանքային արտադրանքն աճել է . . . տոկոսով, 1930 թվականի հանդեպ:

զ) Ավելացել է սոցիալ—կուլտուրական հիմնարկների ցանցը: Վորոշ չափով բարելավվել է նրանց աշխատանքի վորակը,—1 ին աստիճանի դպրոցներում 100 տոկոսով ընդգրկվել են դպրոցահասակ յերեխաները, կազմակերպվել են գյուղական յերիտասարդության 2 դպրոցներ, 17 տոկոսով

ավելացել է լիկկայանների թիվը և 82,2 տոկոսով ընդգրկված են անգրագետները: Հայնացել է խրճիթ—ընթերցարանների և ակումբների ցանցը, առողջապահական ցանցը: Կազմակերպվել են 25 մանկամուրներ, 500 յերեխաներով: 1930 թվականի հանդեպ ժողովրդական կրթության գծով բյուջեն աճել է 106 տոկոսով և ժողովրդական առողջապահության գծով—90 տոկոսով:

ե) Անց է կացվել ռայոնական և գյուղական ապարատների տեղայնացումը (կարենիզացիան): Բոլոր գյուղական ապարատներում և ռայոնական ծաղարատի (վորն անմիջական կապ ունի բնակչության և ստորին խավերի հետ) մեծ մասում մտցվել է հայերեն լեզուն: Դրա հետևանքով վորոշ չափով լավացել է ստորին խավերի դեկավարությունը:

ը) Կատարված ու գերակատարված է միջոցների մոբիլիզացիայի պլանը (112 տոկոս), անասնաբուծությանը (110,2 տոկոս), «5 ամյակը հորս տարում» փոխառություն առաջին մասը (102 տոկոս), ձվերի ու թռչնեղենի մթերումները (99 տոկոս) և այլն (ռայոնը յերկու անգամ պարգեվատրվել է միջոցների մոբիլիզացիայի պլանը գերակատարելու և ձխախոտի բերքահավաքը ժամկետից առաջ ավարտելու համար):

թ) Հաշվետու ժամանակաշրջանում կուլակազմակերպությունն աճել է 26,3 տոկոսով: Բավարար է նրա քաղաքական—բարոյական կացությունը: Բարելավվել է նրա վորակային կազմի ի հաշիվ բանվորական միջնաշերտի (պրաուրյկայի)—1930 թվի հանդեպ աճում 22,7 տոկոսով (պրաուրյկայի)—1930 թվի հանդեպ աճում 22,7 տոկոսով: Վորոշ չափով ուժեղացել է և աստիճանավորվել Ռայկոմի դեկավարությունը բժիշկների վրա և Ռայկոմը դործնական ոգնություն և ցույց տվել նրանց՝ աշխատանքի ընթացքում:

ժ) Կուլակության մնացորդների և հակախորհրդային տարրերի դեմ իր ժամանակին պայքարի միջոցներ ձեռնարկելու շնորհիվ, ռայոնի քաղաքական դրությունը 7-րդ կուսկոնֆերենցիայի ժամանակ միանգամայն կայուն է:

Լսելով և ըննելով Ռայկովի քարտուղար ընկ. Մուրա-
տովի զեկուցումը վեցերորդ կուսկոնֆերենցիայից հետո
Ռայկովն անհապառարկա աշխատանքի մասին և
յեղնելով վերոհիշյալից, ռայկուսկոնֆերենցիան Ռայկովի Բա-
ղամյան գիծը համաձայն է ուղիղ յեվ նրա գործնական առ-
խառնման—բավարար:

Դասակարգային կատարելի կոնֆերենցիայի պայմաններում,
ալ ուղղորդողի և նրա կենսագործիչների, հակահեղափո-
խական տրոցկիզմի կողմնակիցների դեմ բանվորների ու
կոլտնտեսական լայն ժողովների անմիջական մասնակցու-
թյամբ մղված անհաշտ պայքարի պայմաններում ձեռք բեր-
ված հաջողությունների հետ միասին, ռայկուսկոնֆերեն-
ցիան նշում է մի շարք կարևորագույն պակասություններ
աշխատանքներում, վերոհիշյալ հետևյալն են.—

1. Անբավարար է ռայկովական և գյուղական կազմա-
կերպությունների ղեկավարությունը կոլտնտեսություննե-
րի վրա և սրանց հասցվող գործնական ոգնությունը: Դրա
շնորհիվ անբավարար են դրված հաշվառն ու հաշվետվու-
թյունը, թույլ է ընդերվել (փնդրենիյե) մանր-խաբակային
գործավարձը, սոցմրցությունն ու հարվածայնությունը: Կոլ-
տնտեսական մասսաները բավականաչափ չեն ներդրավել
կոլտնտեսության տնտեսական կյանքին և այստեղից առաջ
է յեկել արտադրական խորհրդակցությունների աշխատան-
քի թուլություն: Անբավարար է կոլտնտեսականների սո-
ցիալ-կենցաղային սպասարկման աշխատանքը, անբավա-
րար է կազմակերպվել բերքի բաշխման աշխատանքը
և այլն:

2. Ուշացել են 1932 թ. գարնան հախապատրաստու-
թյան համար աշխատային աշխատանքները, վերով անբա-
վարար է կատարվել աշխատավարի պլանը (51,5 տոկոս),—
մանավանդ անտառամաքրման գործում (12,7 տոկոս):

3. Անբավարար է անասունների ձմեռելու պատրաս-
տությունը (անասունները չեն ապահովվել կերով և շենքե-
րով) և վատ է դրված նրանց խնամքը:

4. Վոչ լրիվ ուշադրություն դեպի անհատական սեկ-
տորը և թույլ մասսայական հասարակական աշխատանք:

5. Միանգամայն անբավարար աշխատանք կանանց մեջ:

6. Անբավարար է յեղել կոոպերացիայի աշխատանքը
բացակայել է տնտեսաշարժը, վատ է կազմակերպված հա-
սարակական սնունդը, սոցիալ-կուլտուրական հիմնարկների
մատակարարումը (գլխավորներ, հիվանդանոցներ, մուսուներ
և այլն):

7. Բացակայել է արհմիությունների աշխատանքի վե-
րակառուցումը՝ Համարհմխորհի 5-րդ պլենումի վերջումնե-
րի հիմունքով: Թույլ է յեղել ստորին կազմակերպություն-
ների ղեկավարությունը: Բանվորներն ու ծառայողները լը-
րիվ չեն ընդգրկվել միություններում: Միությունների ան-
գամների մեջ թույլ է յեղել քաղաքական-դաստիարակչա-
կան աշխատանքը:

8. Կոմիերիտական կազմակերպության աշխատանքում
մի շարք նվաճումների հետ միասին պետք է նշել, իբրեւ
հիմնական պակասություն, նրա կազմի մեծ հոսունությունը,
տեղական բլիշների ամեն մեկի առանձնահատկու-
թյուններից բխող ղեկավարության բացակայությունը,
կուսակցիկների կողմից թույլ ուշադրություն դեպի նրանց,
կազմակերպության թույլ աճումը և անբավարար աշխա-
տանքը՝ լավագույն կոմիերիտականներին կուսակցությանը
հանձնելու գործում:

9. Անտառարդյունաբերական տնտեսությունների արդ-
քի նպաստների սխտեմատիկ թերակատարումը նրանց կող-
մից, մանավանդ արտահանության ասպարիզում,—շնորհիվ
նրանց թույլ գործնականություն:

10. Ապարատների լրացված չլինելը, Ռայկովի ներսում
կազմակերպության պատրաստություն թույլ աշխատանքը, առաջ քաշ-
վածների հետ կատարվելիք աշխատանքի բացակայությունը:

11. Անբավարար հսկողություն ռայկովական ու յեղ-
կային կազմակերպությունների վերջումների կատարման
վրա և պլանայնություն տարրերի բացակայությունը գյուղա-

կան և մասամբ ռալոնական կազմակերպությունների աշխատանքում:

12. Անբավարար աշխատանք կուսուսավորության ասպարիզում, վորը հարկավոր չափով չի անդրադարձել ստորին կուսըջիջների աշխատանքի վրա: Միանգամայն անբավարար և կուսակցության անդամների ու թեկնածուների հաճախումը դպրոցների, խմբակների պարապմունքներին (իսկ նրանք բավարար չափով—80,3 տոկոսով ընդգրկված են այդ ցանցով), չնայելով կազմակերպության անդամների կուլտուր-քաղաքական ցածր մակարդակին:

Յեկակետ ունենալով մատնանշված նվաճումներն ու թերությունները և հնգամյակի 4-րդ տարում զրկված խընդիրները, ռալոնական յոթերորդ կոնֆերենցիան նշում և հետևյալ միջոցառումները կուսակցության Ռալոնական Կոմիտեյի գործնական աշխատանքի համար:—

1. Ամրապնդելով ձեռք բերած հաջողությունները կոլտնտեսական շինարարության բնագավառում, ռալոնական ու դյուդական կազմակերպությունների հիմնական ուշադրությունը դարձնել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման վրա, մինչև գարնանացանի կամպանիան ավարտելով գոյություն ունեցող մանր կոլտնտեսությունների խոշորացման աշխատանքը, բարելավելով նրանց ռպերատիվ-տնտեսական գործնեյությունը: Ուժեղացնել Ռալոնական Կոմիտեյի կողմից նրանց հասցվող գործնական, կենդանի ոգնությունը, հենց տարվա սկզբից ճիշտ կազմակերպել հաշվառքն ու հաշվետվությունը, խոշորացված կոլտնտեսություններն ապահովելով հաշվեգրտական փորձված աշխատողներով:

Մատնանշելով անբավարար նախապատրաստությունը յեկամուտների բաշխման համար և այս բնագավառում մի քանի սխալները (բնամթերքային ֆոնդն ըստ շիջի բաժանելու դեպքը (Կրայնայայաշիլ), աշխատանքային որերի մեխանիկական իջեցումը և այլն), վորոնք ձեռնարկված միջոցների շնորհիվ իր ժամանակին վերացվեցին, կոնֆերեն-

ցիան հանձնարարում և Համկոմկուսի(բ) Ռալոնին ապահովել մինչև 1932 թվականի հունվարի վերջը կոլտնտեսություններում յեկամուտների պրակտիկ բաշխումը, 1931 թվականին կոլտնտեսությունների կատարած աշխատանքների հանրագումարների շուրջը ծավալել մասսայական աշխատանք մնացած անհատականների միջև, գործնական որերնակներով ապացուցելով կոլտնտեսությունների առավելություններն և ոգուտները, ապահովելով 1932 թվականի գարնանը ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈՆՏԵՏԵՍԱԿԱՆ ՑԱՆՔԸ:

Կոնֆերենցիան պարտավորեցնում և Ռալոնին նոր կազմին անհապաղ կերպով դբաղվել գյուղում և ձեռնարկություններում կուսաշխատանքի գործնական վերակառուցմամբ, այդ աշխատանքը զլսավորապես ոգտագործելով ցանքի կամպանիայի հաջող իրագործման, արտադրական պլանների և տնտեսաքաղաքական կամպանիաների պլանների կատարման համար:

2. Մինչև դարնանացանի կամպանիայի սկիզբը մնացած կարճ ժամանակամիջոցը պարտավորեցնում և կուսկազմակերպությանը՝ ամենամեծ ուշադրություն դարձնել նախապատրաստական աշխատանքին:

Հավանություն տալով ցանքերի տարածությունը 20 տոկոսով ավելացնելու և հիմնական կուտուրայի—ծխախոտի վերաբերմամբ 50,3 տոկոսով ավելացնելու պլանին—այդ ավելացումը լինելու յե յեգրպտացորենի ցանքերի 19,1 տոկոսով կրճատելու հաշվին—կոնֆերենցիան պարտավորեցնում և Ռալոնական Կոմիտեյին ապահովել նախապատրաստական աշխատանքների հաջողությունը, անպայման ավարտելով անտառամարման, ջիւմոցային տնտեսության հիմնուման պլանը, առանձնապես ուշադրություն դարձնելով տաք ջիւմոցների թիվն ավելացնելուն, վաղատունկ ծխախոտների տունկը պահանջված տարածությամբ ապահովելու համար:

Մատնանշելով պլանատացիոն և տնտեսական շինարարության մատնակի վիժեցումը 1931 թվին, կոնֆերենցիան

հանձնարարում ե Ռայկովին այդ աշխատանքը վերցնել ու-
ռանձին հսկողութեան տակ, իր ժամանակին միջոցներ
ձեռք առնել մինչև շինարարութեան սկիզբը՝ վոչ ուշ, քան
մինչև այս տարվա ապրիլի 1-ը պակասորդ շինանյութերով
ապահովվելու համար:

3. Ռայոնի աշխարհագրական դիրքը ու բնական պայ-
մանները միանգամայն նպաստավոր են անասնաբուծութեան
ավելի արագ տեմպերով զարգացման և սոցիալիստական
վերակառուցման համար:

Հավանություն տալով այս բնագավառում 1932 թվի
համար պլանային նախագծումներին, կոնֆերենցիան հանձ-
նարարում ե վճռական միջոցներ ձեռք առնել վոյսարներ
և ցեղային անասուններ ներածելու պլանների կատարման
համար, նպատակ ունենալով բարելավել անասունների վո-
րակը, ստեղծել նորմալ պայմաններ (կիր, շենք) և բարե-
լավել անասնաբուծական և անասնաբուծական սպասարկու-
մը: Կոնֆերենցիան ուշադրություն ե հրավիրում այն բանի
վրա, վոր անհրաժեշտ ե բարելավել անասունների խնամքն
ու պահվածքը.— նրանց թվում նաև շրժկանների,— ամբող-
ջովին վերացնելով այս գործում գիմադրկություն և անաս-
նաբուծության, մանավանդ խողաբուծության զարգացման
հարցերը համարելով բոլոր ռայոնական ու գյուղական կադ-
մակերպությունների հիմնական ու մերձավոր խնդիրներից
մեկը:

4. Մատնանշելով, վոր VI-րդ կուսկոնֆերենցիայի վո-
րոշումները բանջարաբուծության, պարտիզարուծության և
կուլտուրական այդեգործության մասին (վորոնք զարգաց-
ման մեծ նախադրյալներ ունեն, ինկատի առնելով Ռայոնի
պայմանները) ամբողջովին չեն իրացված և բոլորովին չեն
կատարված գյուղխորհրդների մի մասում, կոնֆերենցիան,
հավանություն տալով 1932 թվի համար նշված պլաններին,
պարտավրեցնում ե ՀԿ(բ) Ռայկովին անպայման հաջո-
ղեցնել պլանների ռեյալ կատարումն, այնպես, վորպեսզի
ընթացիկ տարում ամենամեծ չափով պակասեցնել բանջա-

րանոցային ե այդեբուծական մթերքների ներածուծը Ռա-
յոնում և ապահովել Ռայոնի մատակարարումը ներքին պա-
շարներով:

5. Ռայոնի տնտեսութեան յերկրորդ հիմնական ճուղը
պիտի համարել անտառային տնտեսութեանը, վորը կարևո-
րագույն նշանակություն ունի Ռայոնի եկոնոմիկայում:

Հավանություն տալով VI-րդ կուսկոնֆերենցիայի
վորոշումների կատարմանը, ինչպես և ՀԿ(բ) Ռայկովի
բյուրոյի վորոշման կատարմանը— մեկ տնտեսական ուժեղ,
աշխատունակ միավորի հետագա վերակազմութեան և ստեղ-
ծման ժախն,— կոնֆերենցիան հանձնարարում ե Ռայկովին՝
արագացնել յերկու անտառատնտեսութեանների (հայկական
և հայկ. Չերնիդովի) ձուլման աշխատանքը, միջոցներ ձեռք
առնելով խոշորացվելիք անտառատնտեսութեանը աշխա-
տողների լավագույն կադրերով ապահովելու համար. հենց
առաջին որերից ամբողջովին մտցնել տնտեսահաշվարկը,
աշխատանքի գործավարձային վարձատրությունը բոլոր
մասերում, կարգավորել տնտեսութեանը և մանավանդ տե-
ղափոխությունները, անպայման ապահովել 1932 թվականի
պլանային առաջադրությունների կատարումը, մանավանդ
եքսպորտային արտադրանքի վերաբերմամբ:

Դրա հետ մեկտեղ, պետք ե արմատապես վերակառու-
ցվել անտառագործական կազմակերպությունների կուսակ-
ցական, արհմիութենական ու կոոպերատիվ ողակների աշ-
խատանքը, աշխատանքի ծանրության կենտրոնը փոխա-
դրելով դեպի ստորին մասերը (բրիգադ, ցեխ, հանրակա-
ցարան, հողամաս), այդ միջոցառումները կիրառելով ամեն-
որյա գործնական աշխատանքում:

6. Տնտեսական աճումը և բանվորների, կուլտեսա-
կան մասսաների ակտիվություն իրենց հերթին առաջ են
բերում կուլտուր-սոցիալական սպասարկման մեծ պա-
հանջ:

Բավարար համարելով կուլտուր-սոցիալական հիմ-
նարկների ցանցի նշված պլանը և զարգացական հասակի

յերեխաների ընդհանուր նախնական պարտադիր ուսման վերաբերյալ դիրեկտիվների կատարումը, կոնֆերենցիան Ռայկովի ուղադրութունն և հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ և բարելավել դպրոցական ցանցի աշխատանքը, սովորողների նյութական սպասարկումը, շարունակելով մանկավարժական կազմի լրացումը պատրաստված կադրերով. մասնավորապես ապահովել «նախնական և միջնակարգ դպրոցների մասին» Կենտկոմի վորոշման լիակատար իրագործումը:

Դպրոցների նորմալ աշխատանքի հիմնական խոչնդոտներից մեկը համարելով նրանց ցրվածությունը, վորով անհարմարություն և ստեղծվում մեթոդ-ղեկավարություն համար, ապա լուսաբանի կտրվածությունը տեղերից, կոնֆերենցիան հանձնարարում և Համկոմկուսի (բ) Ռայկովին՝ չափել դպրոցական ցանցի վերակառուցման հարցն այնպես, վոր նա կենտրոնացվի գյուղխորհրդների տեղերում, կադմակերպվին ինտերնատներ՝ գյուղականներից հաճախող աշակերտներին համար, անհրաժեշտ համարելով նույնպես նոր ուսումնական տարվա սկզբից 2 կրկնրիտ դպրոցների միացումը և և այդ միացված դպրոցի հետ ինտերնատի կադմակերպումը:

Վերակառուցել ակումբների և խրճիթ-ընթերցարանների աշխատանքը, վերջինս ծառայեցնելով արգֆինսպլանների կատարմանը: Ակումբներն ու խրճիթ-ընթերցարանները դարձնել գյուղում կուլտուրայի իսկական ոջախեր, կենտրոնացնելով նրանց մեջ կուլտուր-մասսայական աշխատանքը, աշխուժացնելով խմբակներին, պատի լրագրերի աշխատանքը, կադմակերպելով դասախոսություններ, դեկուցումներ և այլն:

Բարելավել լիկկայանների աշխատանքը, 100 տոկոսով ընդգրկելով անգրագիտներին, այնպես, վորպեսզի Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին Ռայոնում ամբողջովին վերացնել անգրագիտությունը:

Փողովրդական առողջապահության ասպարիզում, ստացիոնար մահճակալների թիվն ավելացնելու և բժշկական

աշխատավորներ տրամադրելու միջոցով բնակչության բժշկական ոգնություն ուժեղացումով մեկտեղ՝ ամենամեծ ուշադրություն դարձնել նաև սանիտարական-պրոֆիլակտիկ միջոցառումների հարցերին, ապահովելով սանիտարական միևնույն կիրառումը բոլոր հիմնարկներում, կադմակերպություններում, մասնավորապես արտադրության մեջ և կոլտնտեսություններում:

Դրա հետ միաժամանակ ապահովել առողջապահական միջոցառումների կիրառումը, կադմակերպելով ճամբար պիոներների համար, ֆիզկուլտուրայի հրապարակներ և այլն:

7. Հնդամյակի չորրորդ տարվա խնդիրները հաջողությունով իրագործելու հիմնական նախադրյալներից մեկը, ինչպես և մինչև հիմա, հանդիսանում և մասսայական կուլտուր-քաղաքական աշխատանքը: Կոնֆերենցիան գտնում է, վոր այդ աշխատանքն իր վրա պետք և կենտրոնացնի բոլոր ռայոնական և գյուղական կադմակերպությունների ուշադրությունը, վորպես առաջնակարգ կարևորություն ունեցող քաղաքական մի խնդիր. ուստի ՀԿ(բ)Կ ռայկոմիտեն հանձնարարում է հետադաշում ևս ամբողջ աշխատանքը կատարել բանվորական, կոլտնտեսական, արհմիութենական մասնաաների մեջ լայն մասսայական կադմակերպչական աշխատանքի ծավալման հիմունքով, կատարելով այն սիստեմատիկորեն, պլանով, բանվորներին ու կոլտնտեսական մասսային արտադրական խորհրդակցությունների, հանձնաժողովների միջոցով լայնորեն ներգրավել արտադրության ու կոլտնտեսությունների տնտեսական-արտադրական գործունեության կարևորագույն հարցերի լուծմանը, ամենամեծ չափով ոգտագործելով բանվորների առաջարկներն ու առցիոնալիզատորական միջոցառումները:

Մամուլը համարելով մասսայական աշխատանքի լծակներից մեկը, կոնֆերենցիան ամբողջ կտրուկությունով պնդում է ռայոնական լրագիր կադմակերպելու անհրաժեշտությունը և, հավանություն տալով Ռայկովին նշած միջոցա-

առումներին, նրան պարտավորեցնում ե յերկրային կազմակերպութիւնների միջոցով հաջողեցնել ռաշոնական լրագրի հրատարակութիւնը, այստեղից, իրրե Ռայկոմի հերթական խնդիրը, կոնֆերենցիան առաջադրում ե բանգյուղթղթակցական աշխատանքի աշխուժացման հարցը, բանգյուղթղթակիրները պարբերական խորհրդակցութիւններ պետք ե գումարել ե ապահովել նրանց աշխատանքի ղեկավարութիւնը:

Անհրաժեշտ համարել ընթացիկ տարում բանգյուղթղթակիրների կարճատե կուրսերի կազմակերպումը 20 հոգու համար:

8. Ռայոնի տնտեսական հաջող շինարարութեան հարցերը դեմ են առել ե դեմ են առնում ճանապարհների իսպառ բացակայութեանը:

Կոնֆերենցիան առաջարկում ե Համկոմիւտի (բ) Ռայկոմին ապահովել Յերիզավիտկա—Խոյթա ուղնշինարարութեան իրագործումն ըստ պլանի, այդ աշխատանքն սկսելով շինարարական սեզոնի սկզբից:

9. Կոնֆերենցիան առաջարկում ե Ռայկոմին 1932 թ. ձեռնարկել մի շարք գործնական միջոցառումներ՝ ռաշոնական կենտրոնի բարեշինութեան համար, մասնավորապես ապահովել ելեկտրոկայանի ե պլանով նախատեսնված շինարարութեան բոլոր որոշումների ավարտումը,—թե բնակարանային ե թե կոմունալ, դպրոցական ու հիվանդանոցային շինարարութեան, միաժամանակ ապահովվելով անհրաժեշտ շինանյութերով, բանվորական ուշոժ ե տեխնիկական ղեկավարութեամբ:

10. Կոնֆերենցիան առաջարկում ե ձեռնարկել մի շարք գործնական միջոցառումներ, վորոնցով պիտի առողջացվի ռաշոնացման ֆինանսատնտեսական ե օպերատիվ գործունեութիւնը, ղեկավարութիւնն ամրապնդելով վորձված աշխատողներով, յերկրային կուսակազմակերպութիւնների առաջ հարց հարուցելով Ռայկոմի շինանյութի օժանդակութիւն տալու մասին:

Հատկապես առաջարկվում ե ապահովել հասարակական սնունդն ի հաշիվ արտապլանային մթերումների, ինչպես նաե բարեկամել բանվորական մատակարարումն ի հաշիվ բանջարանոցային տնտեսութիւնն հիմնելու—վոչ պակաս քան 50 հեկտարի վրա—ե բանկոպերացիային կից չաղացման (անասունների) 2 կայան հիմնելու:

11. Կոնֆերենցիան առաջարկում ե արմատապես բարելավել ստորին (գյուղական) կազմակերպութիւնների աշխատանքը, ուժեղացնելով ռաշոնական հաստատութիւնների, կազմակերպութիւնների կողմից գործնական, կենդանի ոգնութիւնը նրանց, ստորին աշխատողների կազմն ուժեղացնել ավելի պատրաստվածներով, վորոնք ունեն գործնական վորձառութիւն, մտցնել պլանայնութեան տարրեր, հաստատել համապատասխան վերահսկողութիւն, անպայման ավարտել բոլոր կազմակերպութիւնների ապարատների տեղայնացումը ե գործավարութեան 100 տոկոսով փոխարինումը հայերեն լեզվին:

12. Նպատակ ունենալով ապահովել տեղայնացման միջոցառումները, կոնֆերենցիան առաջարկում ե Ռայկոմին յերկու տասնորակի ընթացքում նշել ընդհանուր ռաշոնական պլան՝ պատրաստելու ե վերապատրաստելու աշխատողներ բոլոր սիստեմների համար, ռաշոնական կուրսերով (ռայոնի ներսում) անցկացնել վոչ պակաս, քան 200 աշխատողներ տեղական բնակիչներից, նրանց ավելի լայն չափով ե ավելի համարձակորեն առաջ քաշելով ղեկավար աշխատանքի համար:

Առաջ քաշման գործում ունեցած նվաճումների հետ միասին (45 մարդ), կոնֆերենցիան հանձնարարում ե ապահովել առաջ քաշվածների աշխատանքի ղեկավարութիւնը, ճիշտ դասավորելով ուշոժերը, նրանց հետ ունենալով սիստեմատիկ պարապմունքներ, ստեղծելով նրանց համար աշխատանքի բարենպաստ պայմաններ:

13. Կոնֆերենցիան մատնանում ե, վոր 6-րդ կուսկոնֆերենցիայի ժամանակ յերկրային կուսակազմակերպութիւնների աշխատանքի



մի շարք թերություններն այսոր դեռ ամբողջովին չեն վերացված:

Կոնֆերենցիան հանձնարարում է Համկոմկուսի (Բ) Ռայկոմին առանձնահատուկ ուշադրություն դարձնել աշխատանքի այդ ճակատամասին, աշխատելով, վոր ամենակարճ ժամանակամիջոցում իսկապես վերականգնվեն արհմիութենական կազմակերպությունները, Համարմխորի 5-րդ պլենումի վորոշումների հիմունքով յերեսով դառնալով դեպի արտադրությունը, գլխավորելով բանվորների նախաձեռնությունը, ավելի շատ ծավալելով սոցմրցումն ու հարվածայնությունը, գլխավոր կրակն ուղղելով արդֆինպլանների կատարման ու գերակատարման համար, ավելի լայն ծավալելով աշխատանքը բանվորների մեջ՝ տեխնիկային տիրապետելու ուղղությամբ, բանվորական մասշտաբների նյութական-կենցաղային պայմանների բարելավման և կուլտուրական սպասարկման հետ միասին:

14. Կոնֆերենցիան անհրաժեշտ է համարում ավելի ևս ուժեղացնել ուշադրությունը դեպի աշխատանքի կարևորագույն ճակատամասը—յերկաթուղին, ուժեղացնել դեկավարությունը, ապահովել տրանսպորտի աշխատանքի մասին Կենտկոմի ղերեկավարների ղեկ իրադրոժումը, ամենորյա ոգնություն հասցնելով յերկաթուղային կազմակերպություններին, պատասխանատվությունը դնելով Ռայկոմի Բյուրոյի անդամներից մեկի վրա:

Կոնֆերենցիան առաջարկում է Ռայկոմին և Ռայգործկոմին համապատասխան կազմակերպությունների առաջ հարց հարուցել խոյթայում նոր կայարան և պահեստների շինքեր կառուցելու մասին:

15. Կոմյերիտական կազմակերպության աշխատանքում յեղած մի շարք պակասությունները—թեև նրա աշխատանքները վորոշ չափով ուժեղացել են 1930 թվականի համեմատությամբ,—ցույց են տալիս, վոր այնուամենայնիվ դեպի այս աշխատանքը բավականաչափ ուշադրություն չի

դարձվել ռայկուսկազմակերպության, մանավանդ տեղական կուսբջիջների կողմից:

Կոնֆերենցիան առաջարկում է Ռայկոմին ուժեղացնել իր դեկավարությունը, մասնավորապես կոմյերիտիությանն ամրացված կուսակցականների աշխատանքը, պահանջելով վերջիններից լիակատար պատասխանատվություն կոմյերիտական ու պրոներական կազմակերպությունների դրության և աշխատանքի համար:

Ռայոնում կոմյերիտական 43 բջիջների գոյությունը պահանջում է ամբողջ կուսկազմակերպությունից, մանավանդ տեղական կուսբջիջներից՝ ամենորյա ուշադրություն և կենդանի ոգնություն կոմյերիտ բջիջների աշխատանքին, սիստեմատիկորեն պիտի աշխատել բարձրացնել կազմակերպության կուլտուր-քաղաքական մակարդակը, նրա կազմի աճումն ու բարելավումն ի հաշիվ բանվոր և կոլտնտեսական յերիտասարդության ներդրուման, վերացնելով այս տարի տեղի ունեցած անթույլատրելի հոսունությունը:

16. Մատնանշելով, վոր կանանց մեջ կատարվող աշխատանքում 6-րդ կուսկոնֆերենցիայից հետո չի յեղել առաջարժում, կոնֆերենցիան պարտավորեցնում է Ռայկոմին ձեռք առնել վճռական միջոցներ այդ պակասությունը վերացնելու համար, կանանց մեջ կատարվող աշխատանքի պատասխանատվությունը դնելով Ռայկոմի Բյուրոյի անդամներից մեկի վրա, անհապաղորեն հաջողեցնելով կանանց մեջ աշխատելու համար հատուկ աշխատող ստանալու գործը:

17. Ռայկոմի գործնեյության վոչ պակաս կարևոր մի ողակը համարելով կամավոր ընկերությունների աշխատանքը, կոնֆերենցիան հանձնարարում է Ռայկոմին հաջողեցնել նրանց աշխատանքի աշխուժացումը, մանավանդ Պաշր-Ավիաբիմի աշխատանքի, հաշվի առնելով նրա վրա դրված խնդրերների կարևորությունը՝ նախադրակոչային պատրաստության, բնակչության ռազմականացման ասպարեզում, կազմակերպչորեն ձևավորել ՄՈՊՐ և ՌԿՍ ընկերությունները, լրացնելով նրանց աշխատողների կադրերով, ստեղ-

ծելով տեղական բժիշկներ և նրանց ղեկավարութեան հարցերը մեծ չափով անդրադարձնելով իր ամենօրյա գործնական աշխատանքում:

18. Կոնֆերենցիան հանձնարարում է Ռայկուսկոմին հետազոտում ևս ուժեղացնել լուրջ ուշադրութեամբ կուսակազմակերպութեան խնդիրներին և ազգային կազմի աճման ու կանոնավորման հարցերին, ապահովելով կազմակերպության աճումն ի հաշիվ բանվորների, լավագույն հարվածայինների, կոլտնտեսականների, նացիոնալների, կանանց և յերիտասարդների:

Անբավարար համարելով Մարքս-Լենինյան դաստիարակութեան աշխատանքը, կոնֆերենցիան առաջարկում է Ռայկոմին վճռական միջոցներ ձեռք առնել կազմակերպության քաղաքական մակարդակը բարձրացնելու համար, 100 տոկոսով ընդգրկելով կոմունիստներին, առաջին հերթին թեկնածուական կազմը, կուսակազմակերպության ցանցով, վճռականորեն արժատահանելով ամեն տեսակ զորացրվածությունն ու պարապելու ցանկութեան բացակայությունը, վոր դրսևորվում է կուսակցութեան առանձին անդամների ու թեկնածուների կողմից:

Մինչև ժամանակ ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ լրացնելու խմբակներն ու դպրոցները ղեկավարներով, ապահովելով մայրենի լեզվով կազմված դասագրքերով:

19. Հավանութեամբ տալով Ռայկոմի Բյուրոյի ձեռնարկած միջոցառումներին՝ կուսակցութեան դեմ պայքարելու ասպարիզում, կոնֆերենցիան հանձնարարում է Ռայկոմի նոր կազմին և բոլոր կազմակերպություններին՝ ավելի ևս ուժեղացնել պայքարը կուսակցութեան մնացորդների դեմ և 1932 թվականի գարնանը Ռայկոմում համատարած կոնկրետ վացումն ավարտելու հիմունքով, վերջնականապես լիկվիդացիայի յենթարկել կուսակցութեան մնացորդներին վորպես դասակարգի:

20. Կոնֆերենցիան գտնում է, վոր հնգամյակի վերջին տարվա խնդիրների հաջողակ կատարումը հնարավոր է

միայն կուսակցութեան զլխավոր գծի համար վճռականապես պայքարելու, լենինյան գծից ամեն տեսակ թեքումների դեմ անխնայորեն պայքարելու համար կուսակազմակերպություններին զորահաւաքելու հիմունքով:

Կոնֆերենցիան ամբողջ կուսակազմակերպությունը համարում է մոբիլիզացիայի յենթարկված և առաջարկում է, դիրեկտիվները և վորոշումները ճշգրիտ, ուղիղ կատարելու, մասսայական լայն աշխատանքը ծավալելու, պլանների կատարման ու գերակատարման համար բանվորական ու կոլտնտեսական մասսաներին կազմակերպելու հիմունքով, բոլոր ողակներում լայնորեն մտցնելով աշխատանքի սոցիալիստական նոր ձևերը—սոցմրցությունն ու հարվածայնությունը, իր ժամանակին ձեռնամուխ լինելով ճեղքվածքների վերացման և ուղղելով պակասությունները քննադատութեան և ինքնաքննադատութեան ծավալման միջոցով—ապահովել Ռայկոմի սոցիալիստական զարգացման հետագա հաջողությունները:

Կոնֆերենցիան հաստատուն հավատ է արտահայտում, վոր կուսակազմակերպությունն, ինչպես մինչև հիմա, աշխատելով նոր ձևով, կուսակցութեան Յերկրային Կոմիտեի զլխավորութեամբ կապահովե մարտական տեսակերով իր առաջ դրված խնդիրների կատարումը:

ԲԱՆԱՁԵՎ ՌԱՅՎԿ—ԲԳՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Հնգամյակի յերրորդ, վճռական տարվա հսկայական խնդիրներն սնվայման պահանջում եյին բոլշեվիկյան համառ աշխատանք:

Ամբողջ Խորհրդային Միութեան մեջ 1931 թվականի հանրագումարներն ամբողջ պարզութեամբ հաստատեցին բանվոր դասակարգի աներեր կամքը, անսպառ յեռանդը, վորը (բանվոր դասակարգը) ընդհուպ մոտեցավ նոր խնդիրներին—հնգամյակի չորրորդ, ավարտական տարվա խնդիրներին, ամբապնդելով կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ ձեռք բերված հսկայական հաջողութիւնները անցած տարում, սոցիալիստական շինարարութեան գործում:

Այդ հաջողութիւնները ձեռք են բերված շնորհիվ բանվորական մասսաների քաղաքական գիտակցութեան բարձրացման, դժվարութիւնների դեմ պայքարելուն, դասակարգային կատարել պայքարի, կուսակցութեան Լենինյան դժի համար մղված պայքարի, կովելով բյուրոկրատիզմի, քաջքուկների, ինքնաքննադատութեան ճնշման դեմ, սխտեմատիկաբար մաքրելով կուս շարքերը դասակարգայնորեն խորթ, պնակալեղ տարրերից, հաստատորեն իրականացնելով կուսակցութեան գլխավոր գիծը:

Պարզ է, վոր այդ խնդիրները հսկայական դեր եյին տալիս նաև Բանվորադուղաղիական Տեսչութեան որդաններին ու վերահսկիչ հանձնաժողովին, վորպես այն որդաններին, վորոնք իրենց աշխատանքով իրագործում են կու-

սակցութեան ու կառավարութեան ղիբեկտիվներէ կատարման վերահսկողութիւնը, վորոնք պահպանում են կուսակցութեան միաձուլութիւնը, կազմակերպում են իր ժամանակին պայքար հիվանդագին յիբեվոյթիների ամեն տեսակների դեմ:

Հայկական ռայոնի վերահսկիչ Հանձնաժողով—Բանվորադուղաղութիւնը, վորն անմիջականորեն աշխատում է Յերկրային վերահսկիչ հանձնաժողովի ղեկավարութեամբ, գործնականորեն իրականացնելով յերկրամասի կենտրոնի ղիբեկտիվները և VI-րդ ռայկուսկոնֆերենցիայի վորոշումները, ամենամեծ ոգնութիւնն է ցույց տվել՝ Հայկական ռայոնի կուլտուրական ու տնտեսական կյանքը սոցիալիստական հիմունքներով վերակերտելու խնդիրների իրագործման ասպարեղում, ձեռք բերելով իր աշխատանքում նկատելի տեղաշարժեր, վորոնք բնորոշվում են հետեւյալ մոմենտներով (ցուցանիշներով).—

ա) Իր ժամանակին կազմակերպել է պայքարը կուսակցութեան դժի ամեն տեսակի թեքումների դեմ, մեծապետական շովինիզմի, կուսակցական ետիկայի կոպիտ խախտման (հարբեցողութեան, անկարգութեան, կապ խորթ տարրերի հետ, սեռական սանձարձակութեան) դէպքերի դեմ, քննելով ընդամենը 51 գործ, վորի հետեւանքով կուսկազմակերպութիւնը առողջ է ու ամրապինդ:

բ) Բանվորների և կուլտնտեսականների ակտիվին ներգրավել է ռայվչ—ԲԳՏ գործնական աշխատանքին, գյուղխորհուրդներին կից ԲԳՏ սեկցիաներ կազմակերպելով—բաղկացած 21 հոգուց,—33 կուլտնտեսութիւններում կազմակերպելով ԲԳՏ աջակցող հանձնաժողովներ—118 մարդ, ձեռնարկութիւններում—9 մարդ, վչ—ԲԳՏ շուրջը խմբելով բողոքների բյուրոյի անդամներին—19 մարդ, ստեղծելով հաստիքից դուրս տեսուչների ցանցը—15 մարդ, կուսատեսակալներ—11 մարդ:

գ) Իր ժամանակին և ամենակարճ ժամկետներում քննել է բողոքներն ու լրագրական թղթակցութիւնները (9

ամսում քննել ե 181 դործ), ձեռնարկելով գործնական միջոցներ՝ պակասություններն ուղղելու համար:

դ) Վորոշ չափով ուժեղացել ե ոսկերատիվ կապը ԲԳՏ ոժանդակող հանձնաժողովների ու սեկցիաների հետ և դեկավարությունը նրանց վրա, պարբերական հրահանգչական ժողովներ գումարելու միջոցով, վորոպց մասնակցել են բանգյուղթղթակիցների ակտիվը, գյուղխորհուրդների վերաքննիչ հանձնաժողովները և վորտեղ քննվել են աշխատանքի ձեւերն ու մեթոդները՝ ու հերթական խնդիրները (9 ամսվա ընթացքում հրավիրված են խորհրդակցություններ՝ 373 հոգու մասնակցությամբ):

յե) Իրագործվել ե սխտեմատիկ վերահսկողությունը յերկրային ու ռայոնական կազմակերպությունների դիրեկտիվները ռայոնական հիմնարկային ու գյուղական կազմակերպությունների կողմից կատարվելու վրա, վորը հնարավորություն ե տվել ուսումնասիրել այդ կազմակերպությունների աշխատանքի զրությունն և նրանց ապարատի աշխատունակությունը:

զ) Կազմակերպվել ե ռայոնի պետական, կոոպերատիվ, տնտեսական կազմակերպությունների գործունեյության հետադոտություն, վորին ներգրավվել ե արդյունաբերական ու կոլտնտեսական ակտիվը (կատարված ե 23 հետադոտություն, վորին մասնակից են դարձվել ավելի քան 123 մարդ): Սրա հետեւանքով հայտնաբերվել և ուղղվել են մի շարք պակասություններ նրանց գործնեյության մեջ միջնակույն ժամանակ անտնտեսավարության, անպատասխանատվության և այլն, մեղավորները կանչվել են դատական և ադմինիստրատիվ պատասխանատվության (դատի յետրված 12 մարդ, աշխատանքից հեռացված ե 7 մարդ):

ե) Կատարված ե պետական հիմնարկների (Ռայֆինբաժին, պետբանկ, միլիցիա և այլն) ապարատի ստուգում, պետապարատը խորթ, պնակալիզ տարրերից մաքրելու առթիվ վերադաս կազմակերպությունների վորոշումները կատարելու ուղղությամբ (զտված ե 6 մարդ):

ը) Կոլտնտեսություններում հիվանդոտ յերեւութների դեմ պայքար ե մղված և կատարվել ե սրանց հետադա կազմակերպչական-տնտեսական ամրապնդման աշխատանքը, գոյություն ունեցող կոլտնտեսությունները խորրացնելու, բանվորական ուժը և ստյաւորանապորտը ռացիոնալ կերպով ոգտագործելու, արտադրական պլանները կատարելու միջոցով, մանավանդ անտառարդյունաբերական կազմակերպությունների վերաբերմամբ, վորոնք ռայոնի աշխատանքի տնհաջողակ ճակատամասն են հանդիսանում:

թ) Նշանակալից արդյունքներ են ձեռք բերված ռայոնական ու գյուղական կազմակերպությունների ապարատի տեղայնացման և գործավարությունը հայերեն լեզվին անցկացնելու ասպարիզում, հաղթահարելով առանձին հաստատությունների դիմադրությունն այդ խնդիրները իրականացմանը:

Լսելով Ռայվ՝ ԲԳՏ նախագահ ընկեր Չալմանովի ղեկուցումը Ռայվ՝ ԲԳՏ աշխատանքի մասին—VI-րդ կոնֆերենցիայից հետո — և յերակետ ունենալով վերոհիշյալը, VII ռայկուսկոնֆերենցիան Ռայվ՝ ԲԳՏ աշխատանքը համարում ե ԲՍՎԱՐԱՐ:

Ռայվ՝ ԲԳՏ աշխատանքներում մատնանշված նվաճումների հետ միասին ռայկուսկոնֆերենցիան նշում ե և մի շարք եյական պակասություններ, այն ե՝

ա) Բավականաչափ ակտիվություն չի յեղել գյուղխորհուրդներին կից ԲԳՏ սեկցիաների և կոլտնտեսություններին ու ձեռնարկություններին կից ոժկոմների աշխատանքներում. բացակայել ե պլանային աշխատանքը, թույլ ե յեղել կենտրոնի հրահանգումը, վորի հետեւանքով գոյություն ունի անուշադիր և անհոգ վերաբերմունք դեպի նրանց՝ տեղական առանձին կազմակերպությունների կողմից, վորոնք բավականաչափ չեն ոգնել նրանց. բացակայել են բողոքների զրքերն ու արկղները:

բ) Ապարատը զտելու և ոսկերատիվ ճկունություն ըստեղծելու աշխատանքի հետ մեկտեղ, առանձին կազմակերպությունների ապարատներում գոյություն ունեն բյուրոկ-

բատիզմի, քաղաքական, անշարժութեան տարրեր, դեպի աշխատավորական մասսաների կարիքներն տնտեսադիր վերաբերմունքի դեպքեր, ինքնաքննադատութեան ճնշում, հալածանք ակտիվիստների դեմ, առանձին տնտեսական ու կոոպերատիվ կազմակերպութեանների ու ղեկավարների աշխատանքի ճշգրտութեան բացակայութիւնը, դիմադրելութեան, անսպասարկանաւորութեան դոքտրինան, միավարութեան սկզբունքների խախտում:

գ) Թույլ է տեղական բնակչութեանից կադրերի պատրաստութիւնը, հարկավոր չափով չեն ծավալվել դասընթացները, ռաշոնական ապարատներում բավարար չափով չեն առաջ քաշված տեղական բնակիչները:

դ) Բավականաչափ ուշադրութեւն չի դարձված կոոպերատիվ կազմակերպութեանների աշխատանքի հարցերին, բացակայել է սիստեմատիկ վերահսկողութեւնը ներանց աշխատանքը կենսոլոմի և ժողկոմսորնի վորոշումների համաձայն իսկապես վերակառուցելու վրա, այստեղից — հասարակական սննդի և բանվորական մատակարարման անբավարար կազմակերպութիւն:

յ) Հարկավոր միջոցներ չեն ձեռնարկված տնտեսական կազմակերպութեանների աշխատանքն ուժեղացնելու համար — բանվորների սոցիալ-կենցաղային պայմանները բարելավելու գործում. Թույլ է յեղել ուշադրութեւնը Ռաշոնի սոցիալ-կուլտուրական ցանցի դրութեան վրա, ինչպէս և մանուկների սպասարկման վրա (մսուրների, հրապարակների բացակայութիւնը, մանկական սննդի վատ կազմակերպութիւն և այլն):

զ) Անբավարար է յեղել քաղաքական-դաստիարակչական աշխատանքը կազմակերպութեան անդամների մէջ:

Յեւակեմ ունենալով վերոհիշյալը, Հայկական Ռաշոնի VII-րդ կուսկոն ֆերենցիան սոաշարկում է ապահովել հետեւյալ միջոցառումների կատարումը.

1. Հետադաշում ևս շարունակել նույն հաստատակամութեամբ ու վճռականութեամբ կուսակցութեան Լենինյան

միասնականութեան պահպանումը, ավելի ևս ուժեղացնել պայքարը ռաշոնականութեան դուր տեսակների և դեպի նրան հաշտվողական վերաբերմունքի դեմ, մանավանդ աջ թեքման և տրոցկիստական կոնտրաբանդի դեմ, անխնայորեն վոչնչացնելով մեծագետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի ցուցահանման բոլոր փորձերը: Կուսակցական ետիկան սիստեմատիկորեն, կոպիտ խախտողներ վերաբերմամբ կազմակերպչական յեղրակացութեանների գործադրութեան հետ մեկտեղ, կազմակերպութեան անդամների մեջ ծավալել քաղաքական-դաստիարակչական մեծ աշխատանք, մանավանդ թեկնածուական կազմի միջև, առանձին հիվանդոտ յերեւոյթներից դասեր առնելով և դրանք մշակելով բջիջների ժողովներում:

2. Մասսայական վերահսկողութեան և ԲԳՏ սեկցիաների, կոլտնտեսութեաններում և ձեռնարկութեաններում յեղած ոժանդակ հանձնաժողովների աշխատանքի աշխուժացման հարցերին կատմամբ ապահովել իր աշխատանքի վերակառուցումը ԿՎՀ պլինումի և ՅեՎՀ վորոշումների համապատասխան, իրագործելով պլանային ու կենդանի ղեկավարութեւնը, նրանց հետ անցկացնելով հրահանգչական խորհրդակցութեաններ՝ արտահաստիքային տեսուչների, կուսատեսուչական միջոցով, ավելի լայն ներգրավելով նրանց գործկաշններին (նիստերը գումարել Ռաշոնում շրջելով, ամենաշուտափութեւն կերպով քննել բոլորքներն ու լրագրական թղթակցութեանները, պլանավոր կերպով անցկացնել հովաքներն ու խորհրդակցութեանները): Պարտավորեցնել տեղական կուս-կազմակերպութեաններին ամենամեծ չափով ռաշոնացործել ԲԳՏ ակտիվը բոլոր տնտեսա-քաղաքական կամայանիներում և բարելավել սոցիալ-կուլտուրական հիմնարկների (ակումբներ, խրճիթ-ընթերցարանների, կարմիր անկոնների ու պատի լրագրերի) աշխատանքը, ցույց տալով նրանց գործնական ոգնութեւնը, ուղղելով նրանց աշխատանքի թերութեանները, կազմակերպելով աշխատանքային փորձի փոխանակութեւնը:

3. Շարունակել վճռական պայքարը անշարժության, բյուրոկրատիզմի, քաշքշուկի, դեպի աշխատավորական մաս-
տանքի կարիքներն անուշադիր և անփույթ վերաբերմուն-
քի տարրերի դեմ, ավելի լայն ծավալել բոլշևիկյան քն-
նադատությունը և հետադադում վճռականապես վերջ տալ
ինքնաքննադատության ճնշման, ակտիվիստներին հալածե-
լու փաստերին, սրանցից առնելով քաղաքական դասեր
միևնույն ժամանակ վճռական հակահարված տալ քննադա-
տություն և ինքնաքննադատությունը կուսակցության
գլխավոր գծի դեմ ոգտագործելու փորձերին, աշխատելով
հետադադում հաջողեցնել ապարատների բարելավումն և
եփանացումը:

4. Վճռական պայքար մղել ապարատներում դիմադր-
կություն դեմ, տնտեսական, խորհրդային, կոոպերատիվ և
կոլտնտեսական կազմակերպությունների ղեկավարների
անպատասխանատվության դեմ և այն անձանց վերաբեր-
մամբ, վորոնք պարզապես չեն ցանկանում ուղղել պակա-
սությունները և կոպտարար խախտում են կուսակցության
ու կառավարության դիրեկտիվները, գործադրել տույժերի
ամենախիստ միջոցներ, անկախ նրանց արժանիքներից և
գրաված դիրքից:

5. Կոնֆերենցիան առաջարկում է ՎՀ—ԲԳՏ-ին ա-
ռանձին հսկողության տակ առնել անտառադրոշնաբերա-
կան տնտեսությունը, կենսագործելով սիստեմատիկ վերա-
հսկողությունը արդիֆինպլանի կատարման վրա՝ ընկ. Ստա-
լինի 6 պայմանների կիրառման հիմունքով, աշխատանքի
նոր մեթոդների-սոցմրցության ու հարվածայնության դար-
գացման, տնտեսա-հաշվարկի և գործավարձի անցկացման,
դիմադրկության, հավասարեցման վերացման, միա-
վարության ամրապնդման և բանվորական ույժի ու
սայլաարանսպորտի ռացիոնալ ոգտագործման հիմունքով:
Առանձին ուղադրություն դարձնել արտադրական խորհր-
դակցությունների աշխատանքների ուժեղացման և տնտե-
սավարների կողմից ռացիոնալիզատորական միջոցառում-

ներն ու բանվորական առաջարկներն արագ կիրառելու և
նրանց ընթացքի վրա, այդ ամբողջ աշխատանքը կատա-
րելիս լայնորեն ոգտագործելով ԲԳՏ ակտիվին:

6. Առանձին հսկողության տակ առնել տեղացիներին
կադրեր պատրաստելու և վերապատրաստելու հարցերը, թե
Ռայոնում կուրսեր կազմակերպելով և թե ուղարկելով նը-
րանց Ռայոնին տրամադրված տեղերը, շարունակելով ավե-
լի լայն չափով առաջ քաշել տեղական բնակիչներից դե-
կավար աշխատանքի, հրավիրելով առաջ քաշվածներին խոր-
հրդակցություններ, ամեն կերպ ոգնություն ցույց տալով
նրանց՝ աշխատելու ժամանակ: Անհրաժեշտ համարել մի-
ամսյա կուրսերի բացումը ԲԳՏ ակտիվի համար, արդեն
յեղած կադրերին ամրացնելով այդ աշխատանքին:

7. Առանձնահատուկ ուղադրություն դարձնել կոոպե-
րատիվ-տնտեսական կազմակերպությունների աշխատանքի
վրա, բանվորական մատակարարման, հասարակական սննդի
և գյուղական բնակչությանը արդյունաբերական ասլրանք-
ներ ու սննդամթերքներ հայթայթելու, արդյունաբերական
ապրանքներն իր ժամանակին սպառողին հասցնելու, արագ
ապրանքաշրջանառության վրա, վճռական պայքար մղելով
ապրանքները քնեցնելու դեմ: Բարելավել ձեռնարկություն-
ներում և կոլտնտեսություններում յեղած ճաշարանների
աշխատանքը, բարելավելով ճաշերի ու նախաճաշերի վո-
րակն և եփանացնելով նրանց:

8. Առանձնահատուկ ուղադրություն դարձնել բանվոր-
ների ու ծառայողների կուլտուր կենցաղային պայման-
ների վրա, ռայոնական տնտեսական կազմակերպություն-
ների առաջ հարց դնելով բնակարանային տարածության
լայնացման մասին—թե բանվորների և թե ծառայողների
համար, միաժամանակ հաջողեցնել ռայոնական կենտ-
րոնում «կոլտնտեսականի տան» կառուցումը — յեկվոր-
ների համար:

9. Առանձնապես ուսումնասիրել հիվանդոտ յերևույթ-
ները կուս և կոմյեխիսական կազմակերպություններում—

հիմունհատներին ու կոմյերիտականների պասիվությունն ու անկարգապահությունն, վճռական պայքար մղելով հարբեցողության, սեռական սանձարձակության դեպքերին, վոչ կոմունիստական արարքներին, աջ և «ձախ» թեքման առանձին արտահայտությունների, հաշտվողականության, մեծապետական և տեղական շովինիզմի դեմ:

Սիստեմատիկորեն ուսումնասիրել կոլտնտեսությունների աշխատանքն և կոլտնտեսական շինարարությունն ընթացքը, միջոցներ կիրառելով նրանց կազմակերպչական տնտեսական ամրապնդման համար, կոլտնտեսականների շարքերը, կոլտնտեսությունները խցկված, հակախորհրդային կուլակային առանձին տարերից մաքրելու, հավասարեցման, դիմադրկալթյան, կորդոգության, վնասարարության, անտնտեսավարության դեմ պայքարելու համար, այդ աշխատանքը կատարելիս սերտ կապակցություն մեջ լինելով Ռայոնի դատական քննիչ օրգաններին հետ:

11. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել մթերոգ կազմակերպությունների կողմից պլանային առաջադրությունները կատարելու վրա, վճռականապես պայքարելով այդ գործում ինքնահոսի վրա հույս դնելու դեմ, խստորեն հետեւելով մթերված հումուլթը ժամանակին ուղարկելուն և մթերումների դիմաց ստացվող արդյունաբերական ապրանքների ստացման և ձիշտ ոգտագործման:

12. Կազմակերպել առանձին վերահսկողություն, մարքս-լենինյան դաստիարակության հարցերի վերաբերյալ ռայոնական ու յերկրային կազմակերպությունների վորոշումներին կատարման վրա: Դաստիարակիչ միջոցները մեծ չափով գործադրելու հետ մեկտեղ, կուսպատասխանատվության կանչել, մինչև Համկոմկուսի (բ) շարքերից վտարելը, այն առանձնապես համառ ընկերներին, վորոնք չեն ցանկանում գրադվել կուսպատրաստությունը:

13. Հանձնարարել Ռայվչ. ԲԳՏ առանձին հսկողության տակ առնել տրանսպորտի կազմակերպությունների աշխատանքը, հաջողեցնելով յերթեվեկող կազմի ամե

նամեծ չափով ոգտագործումը, ամենորյա աշխատանքում կենսագործելով ընկ. Ասդրեի հրամանը, վճռական պայքար ծավալելով հափշտակումների և աշխատաւքային դիսցիպլինայի իսխտման դեմ՝ յերկաթուղային տրանսպորտի բոլոր մասերում:

14. Կոնֆերենցիան գտնում ե, վոր Ռայվչ.—ԲԳՏ մոտակա խնդիրները հանդիսանում են՝ գարնանացանի կամպանիայի հաջողակ անցկացման ապահովումը, ուստի և հանձնարարում ե ուժեղացնել ուշադրությունը պլանների կատարման, նախապատրաստական աշխատանքների հաջող կատարման, մանավանդ ջերմոցային տնտեսության, գլխավորապես տաք ջերմոցների հիմնարկերին, նույնպես հսկելով համապատասխան դյուղական ու ռայոնական կազմակերպությունների վրա՝ նրանց կողմից տնտեսաւքաղաքական կամպանիաների պլանները կատարվելու գործում:

15. Կոնֆերենցիան հատկապես հանձնարարում ե Ռայվչ.—ԲԳՏ կազմակերպիլ սիստեմատիկ վերահսկողություն՝ յերկրային ու ռայոնական կազմակերպությունների վորոշումների իրացման վրա, պատասխանատվության կանչելով այն դեկավարներին, վորոնք գիտակցաւքաւք խախտում ու չեն կատարում դիրեկտիվներն ու վորոշումները:

ԲԱՆԱԶԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱՅՈՆԻ 1932 ԹՎԻ ԿՈՒԼ- ՏՈՒՐ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՄԱ- ՍԻՆ, ԸՆԿ, ԲԱԳԻՆՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Լսելով «Ռայոնի 1932 թվի կուլտուր-տնտեսական շինարարության պլանի մասին» ընկեր Բագինյանի ղեկու-
ցումը և «Ռայոնի անտառային տնտեսության զրույթյան
ու զարգացման մասին» ընկ. Դոդեկանի ղեկուցումը, 7-րդ
ռայկոմսիոն ֆերենցիան վորոշում է.—

1. Համառոտություն տալ Ռայոնի 1932 թվի համար
ներկայացրած ստուգիչ թվերին, վորոնք նախատեսվում են
հետեվյալը.—

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ա) Ցանքերի ընդհանուր տարածությունը հասցնել
4253 հեկտարի, կամ ավելացնել 20 տոկոսով—համեմատած
1931 թվականի հետ. մասնավորապես 50 տոկոսով ավելաց-
նել ծխախոտի ցանքերի տարածությունը,

բ) Ռայոնի անասունների թիվը հասցնել 12300-ի,
այդ թվում — 1000 վոչխար, նպատակ ունենալով զար-
գացնել վոչխարաբուծությունը:

գ) Գյուղատնտեսության մեջ ընդհանուր կապիտալի
ներդրումը—576 հազար ռուբլի:

դ) 1932 թվականին կազմակերպել լրացուցիչ 2 կաթ-
նապրանքային և 2 խոզապրանքային ֆերմաներ:

յ) Ռայոնում մտցնել կուլտուրական այգեբուծու-
թյուն, տնկելով 80 հեկտար այգի:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ա) Մթերել 422 հազար խորանարդ մետր փայտ:

բ) Արտածել 364 հազար խորանարդ մետր:

գ) Ընդհանուր կապիտալ ներդրում — 957 հազար
ռուբլի, վորից անտառային տարածությունների ոգտագործ-
ման համար—756 հազար ռուբլի 1931 թվի 21 հազարի դի-
մաց, կամ ավելացում 629 տոկոսով:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կառուցել զրավի — խճուղի ճանապարհ, 13 կիլո-
մետր յերկարությամբ, Յելիզավետպոլսկայա կայարա-
նից մինչև Սոյթա կայարանը, վերանորոգել 30 կիլոմետր
յեղած գյուղական ճանապարհները: Ընդհանուր կապիտալ
ներդրում—500 ռուբլի:

ԿՈՄՈՒՆԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր կապիտալ ներդրում—430 հազար ռ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ա) Ֆինանսավորման չափն և 360 հազար ռուբլի,
ավելացում 84 տոկոսով. դրանից գյուղյերիս դպրոցների և
4 կոմպլեկտային դպրոցների նոր շինարարության համար
— 73 հազար ռուբլի:

բ) Ռայոնում անգրագիտության վերջնական վերա-
ցում և ռևուցման յենթակա ամբողջ կոնտինգենտի ընդգր-
կումը ընդհանուր նախնական ուսուցմամբ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ա) Ֆինանսավորման չափը—174 հազար ռուբլի —
1931 թվականի 92 հազար ռուբլու հանդեպ, կամ ավե-
լացում 89 տոկոսով:

բ) Մեկ բժշկական հիմնարկի բացում: Մեկ դիսպան-
սերի և յերկու հիվանդանոցների շինարարություն:

Հեռախոսային կապի անցկացումը Ռայոնի բոլոր գյուղխորհուրդներում, վերասարքավորելով գոյություն ունեցող կապը:

Հսկայական նշանակություն տալով կոլտնտեսութ-յունների կազմակերպչական-տնտեսական ու ֆինանսա-կան ամրապնդման, կոնֆերենցիան առաջարկում է Ռայ-կոմին, Ռայգործկոմին և Ռայկոլտնտնությանը առանձին ուշադրութուն դարձնել կոլտնտեսությունների կյանքի և գործունեություն վրա, հաշվի առնելով աշխատանքի սխալ բաժանման առանձին մոմենտները, ուժերի դասավորումը, կոլտնտեսություններում աշխատանքային դիսցիպ-լինան, անտնտեսավարի վերաբերմունքը դեպի կոլտնտե-սությունների անասունները, մանավանդ լծկանը, հավա-սարեցման մոմենտները, կոլտնտեսությունների աշխա-տանքում գործավարձի տարրերի մտցման անբավարարութ-յունը, արտադրանքի ճիշտ նորմաները, կոլտնտեսություն-ների թույլ ընդգրկումը սոցմրցումով և հարվածայնութ-յամբ, կոլտնտեսությունների կողմից իրենց արտադրական պլանների անտեսումը, վորի հետևիվանքով առանձին կոլ-տնտեսություններում շուայվում են աշխատանքային որե-րը (40-50 տոկոսով ավելի, քան թե նախատեսված եր պլանում):

Ձնայելով վոր Ռայոնում կուլակությունը հիմնադա-նում վերացված է, կան առանձին դեպքեր, յերբ մինչև այժմ դեռ չհայտնաբերված և կոլտնտեսությունները խցկված կուլակներն այնպեղ քայքայիչ աշխատանք են կատարում: Առաջարկել Համկոմկուսի (բ) Ռայկոմին, Ռայ-գործկոմին ու Ռայկոլտնտնությանն՝ անհապաղ աշխա-տանքներ կատարել հայտնաբերելու կուլակներին, մաքրե-լու կոլտնտեսությունները այնտեղ խցկված կուլակներից և միջոցներ ձեռք առնել Ռայոնում կուլակության մնացորդ-ների վերջնական վերացման համար:

Հաշվի առնելով այն, վոր դարնանացանի կամպան-իայի համար արտադրական պլանները կազմելու ժամկե-տերը վերջանում են, առաջարկել Ռայգործկոմին, Ռայհոդ-բաժնին և Ռայկոլտնտնության՝ զորահավաքել Ռայոնի ամբողջ աղրո-տեխնիկական պերսոնալը և ներգրավել նրան այդ աշխատանքին: Անհապաղ սկսել կոլտնտեսությունների դարնանացանի կամպանիայի պատրաստության ստուգումը (սերմֆոնդեր, գյուղատնտեսական ինվենտարների վերանո-րոգում, հայտեր (զայավկաներ) սերմացույի ու մեքենա-ների համար, լծկանի ընտրություն և պատրաստություն ու հողատարածությունների պատրաստություն) խստորեն պահպանելով հողաշինարարությամբ սահմանված ցանքա-շրջանները:

Վորովհետև կոլտնտեսություններում այժմ արդեն կա ծխախոտի ցանքի պլանը չկատարելու յերկյուղ, վոր բացատրվում է կոլտնտեսություններում ծխախոտի պլան-ների թույլ մշակմամբ, ինչպես և ծխախոտի տունկի և բերքահավաքի առաջիկա մեքենայացման հարցերի թույլ մշակմամբ, հանձնարարել Ռայհոդբաժնին և Ռայկոլտնտ-նության՝ կոլտնտեսություններում անհապաղ ծավալել ծխախոտի տունկի պլանը մշակելու լայն կամպանիա, կոլ-տնտեսային մասսաներին զորահավաքելով 1932 թվի ծխա-խոտի տունկի պլանները կատարելու համար:

3. Հաշվի առնելով, վոր Ռայոնում տնամանարածութ-յան զարգացումը դեմ է առնում կերի բազային, առաջար-կել ռայոնական կազմակերպություններին, մանավանդ Ռայհոդբաժնին և Ռայկոլտնտնության՝ ապահովել խո-տացանի տարածությունների ցանքն ու բերքահավաքը, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելով սխրոսացման ծրագրի կատարման և խոտացանի տարածությունների ոացիոնալ ոգտագործման համար:

Պարտավորեցնել ռայկազմակերպություններին, վոր նրանք 1932 թվին ծրագրված կաթնաապրանքային և խո-դապրանքային ֆերմաների կազմակերպման հետ մեկտեղ

միջոցներ ձեռք առնեն արդեն դոյություն ունեցող ֆերմաների տնտեսական ամրապնդման համար, ուշադրութե-
յան առնելով նրանց հաժապատախման արտադրողներով
ապահովելու անհրաժեշտությունը:

Վորովհետեւ կոլտնտեսություններում անցած տարի
անասնաբուժական շինարարությունը ապահովեց միայն
անասունների չնչին մասը, միջոցներ ձեռք առնել 1932
թվականի շինարարական պլանն իրացնելու համար:

Միջոցներ ձեռք առնել Ռայոնի անասնաբուժական
ցանցի լայնացման ու լրացման համար, Ռայոնի անասուն-
ների տառվել լրիվ և ավելի լավ սպասարկելու նպատակով:

Առաջարկել Ռայոնսրբաժին և Ռայկոլտնտմիության՝
անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել հողը ժամանակին պա-
տրաստելու համար և ապահովել պտղատու ծառերի տուն-
կերի պահանջվող քանակության ներմուծումը:

4. Ապահովել 1932 թվականին անգրագիտության
լիակատար վերացման մասին կուսակցութան ու կառա-
վարության գիրեկտիվների կատարումը և, չնայելով, վոր
դպրոցական ուսուցմամբ ընդգրկված են բոլոր յերեխաները,
ուշադրություն դարձնել ուսման վորակին, մանկավարժնե-
րի կազմին, մտցնելով դպրոցներում, մանավանդ կոլերիտ-
դպրոցներում, պոլիտեխնիզացման տարրեր, կառուցելով
այն Ռայոնի տնտեսության պլանավոր ճյուղերի հիմունքով,
ամենամեծ չափով ծավալելով մանկահրապարակները ու
մանկամուրների կազմակերպման աշխատանքը, ընդգրկե-
լով նախադպրոցական հասակի յերեխաների 75 տոկոսը:

5. Մարտի 15-ին երեկտրոկայանը գործարկելու (պու-
սկ) կապակցությամբ, Ռայգործկոմը պետք է ապահովի
ռայկենտրոնում կինո-ստացիոնար կառուցումների կազմա-
կերպումը, միաժամանակ ուժեղացնելով շարժական կինո-
ների աշխատանքը: Առաջարկել Ռայգործկոմին և Ռայկոլ-
տնտմիության՝ աշխուժացնելու խրճիթ-ընթերցարանների
ու կարմիր անկյունների աշխատանքը, կարգավորելով խմ-
բակների պարապմունքները, ժամանակին բաժանորդադր-

վելով անհրաժեշտ գրականության: Ի նկատի ունենալով, վոր
խրճիթ-ընթերցարանները չունեն գրադարաններ, իսկ
յեղած գրքերը չեն բավարարում կոլտնտեսական մաս-
սաների աճող պահանջներին, պարտավորեցնել Ռայգոր-
ծկոմին և Ռայկոլտնտմիության՝ միջոցներ ձեռք առնել
1-ին կիսամյակում Ռայոնական գրադարան կազմակերպելու
համար, ինչպես նաև Ռայոնում շարժական գրադարան-
ների աշխատանքը կարգավորելու համար:

Կտրականապես պարտավորեցնել Ռայկոլտնտմիության
և Ռայկոոպմիության՝ ապահովել կուսակցության ու կառա-
վարության գիրեկտիվների կատարումը՝ գյուղական մաս-
նագետների, այդ թվում և ուսուցիչների մատուկարարման
մասին:

6. Պարտավորեցնել Ռայգործկոմին և Ռայկոլտնտմիու-
թյան՝ ապահովել Ռադիոյի անցկացումը բոլոր հեռախոս
ունեցող բնակավայրերում, Յիլիզավետպոլսկի Ռադիո-հանգույ-
ցի միջոցով, իսկ մնացած բնակավայրերն ապահովել խրը-
ճիթ-ընթերցարաններում Ռադիո-ընդունիչներ դնելով: Մին-
չև 2-րդ յեռամսյակի վերջը ապահովել հեռախոսով Տուբայի
գյուղխորհուրդը:

7. Ռայոնում բնակարանային սուր ճգնաժամը վերաց-
նելու նպատակով, 1932 թվի շինարարական սեզոնում
կառուցել խորհրդների տունը: Արագացնել կոլտնտեսականի
տան կառուցումը: Ավարտել և մինչև 1932 թվի մարտի 15-ը
գործարկել Յիլիզավետպոլսկի երեկտրոկայանը:

8. Կոնֆերենցիան մատնանշում է ծխախոտի մթեր-
ման անբավարար ընթացքը, վոր մասամբ բացատրվում է
տվյալ պլանների ռեալ լինելու ռեվիզիայով. կատեգորիկ
կերպով արգելել պլանի «ռեալ չլինելու» պարապ խոսակ-
ցությունները, ներգրավվել և կոլտնտեսականների մասսային
ներգրավել նրա կատարմանը, ուշադրություն դարձնելով
հին ծխախոտի ղգալի պաշարների վրա, վորոնք բնակչու-
թյան մոտ են, և կոնտրաբանդայի դեմ պայքարի վրա:
Առանձին հսկողության տակ առնել յետամնաց անհատական

անկտորը, անհապաղ կերպով լրացնել միջերուժները կուլակ-
ունեուր տնտեսություններից:

9. Վերովհետև գյուղական խորհրդների աշխատանքում
գերակշռում են վարչարարության տարրերը և թույլ և
զրկած անկցիանների ու չքավորական խմբակների աշխա-
տանքը, առաջարկել Ռայգործկոմին վերակառուցել գյուղ-
խորհրդների աշխատանքը, հիմք ունենալով կոլտնտեսական
լայն մասսաների, մանավանդ կանանց լայն ներգրավումը
Ռայոնի հասարակական-քաղաքական կյանքին, նրանց մո-
բիլիզացիան տնտեսական-քաղաքական կամպանիաների շուր-
ջը, միևնույն ժամանակ աշխուժացնելով կանանց գյու-
ղական արտադրական խորհրդակցությունների աշխա-
տանքը:

10. Հաստատելով 1932 թվի համար Ռայոնի անտա-
ռային տնտեսությունների ստուգիչ թվերը, կոնֆերենցիան
մատնանշում է Ռայոնի այդ տնտեսությունների միանգա-
մայն անբավարար աշխատանքը: Առաջարկում է Ռայկոս-
կոմին և Ռայգործկոմին Ռայոնի անտառային կազմակեր-
պությունների աշխատանքն առնել առանձին հսկողության
տակ՝ անպայման ապահովելով նրանց կողմից 1932 թ. պը-
լանի կատարումը, ուշադրություն դարձնելով բանվորական
ուշժի հոստունության, աշխատանքային դիսցիպլինայի լիա-
կատար բացակայության, սոցմրցության ու հարվածայնու-
թյան բացակայության, տնտեսաշավարկի թույլ ընդերման,
դիմազրկության զեպքերի դոյության, անտառատնտեսու-
թյունների ու կոլտնտեսությունների փոխադրական միջոց-
ների թույլ աշխատանքին՝ փայտեղենն արտահանելու
գործում:

Դրա հետ միաժամանակ կոնֆերենցիան հանձնարա-
րում է Ռայկոմին՝ հաջողեցնել, վորպեսզի 100 տոկոսով
կատարվեն Յերկրային անտառամիության ընդունած ֆի-
նանսավորման ու կապիտալ ներդրման պլանները, թույլ
չտալով նրանց իջեցումը, հաշվի առնելով յերկու անտառա-
տնտեսությունների միացումը:

Հատկապես պետք է հաշվի առնել այն բոլոր պակա-
սությունները, վորոնք անցյալում արգելակում էին աշխա-
տանքը, հենց 1932 թվի սկզբից միջոցներ ձեռք առնելով
նրանց վերացման համար, ուշադրություն դարձնելով այն
բանի վրա, վոր անհրաժեշտ է մեծ չափով մեքենայացնել ար-
տադրությունն և բարելավել աշխատանքի պայմանները,
մասնավորապես—

1. Ամբողջովին ոգտագործել յեղած դրամական հատ-
կացումները, մեքենայացման և ճանապարհների ղրությունը
բարելավելու համար:

2. Ավարտել Պշիխի շրջանի նոր սոցագործարանի շի-
նարարությունը:

3. Իր ժամանակին ձեռնարկել բնակարանային շինա-
րարության—բանվորների ու ծառայողների համար—աշխա-
տելով վարկեր ստանալ յերկրամասի կենտրոնից:

4. Շարունակել անտառային տարածությունների ու-
սումնասիրությունը, բոլորովին դադարեցնելով անտառների
գիշատիչ շահագործումը, միևնույն ժամանակ ոգտագործման
համար նշել ավելի հարմար, արժեքավոր, եժան ինքնար-
ժեք տվող և տեղափոխության կողմից հարմար անտառա-
յին տարածությունները:

5. Սեփական փոխադրական միջոցները լրացնել աշխա-
տանքին ավելի հարմար լծկան ույթով և այն չափով, վորն
ապահովում է պլանների կատարումը, տվյալ հարցը բարձ-
րացնելով յերկրային կազմակերպությունների առաջ:

12. Յերկու անտառատնտեսությունների (Հայկական
և Հայկ. Չերնիգովի) միացման կապակցությամբ, կոնֆե-
րենցիան առաջարկում է Ռայկոմին և Ռայգործկոմին վե-
րակառուցել կուսակցական, կոմյերիտական, արհմիութենա-
կան կազմակերպությունների կազմակերպչական կառուց-
վածքը, մասնավորապես կոպերատիվ զծով ի մի ձուլել
գոյություն ունեցող կենտրոնական բանվորական կոոպե-
րատիվները, ապահովելով այդ աշխատանքը մինչև 1932 թվի
փետրվարի 15-ը:



11508

63 1 2
804 - 1

6A 190

«Ազգային գրադարան»



NL0183387

Ответственный редактор
М. М. Гигоян
Технический редактор
Г. М. Меркарян

№ 2266

1932

Сд. в набор 11/III—1932 г.
Сд. в печать 1/III—19 2 г.
Объем 1 1/4 печ. листа
Тираж 500 экз.